

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է ներքին մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

11.09.2020

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է ներքին մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ (ծածկագիր՝ 94-2.1-Ղ5-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ (ծածկագիր՝ 94-2.1-Ղ5-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնի ններայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկավորությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Ներքին մրցույթին կարող են մասնակցել փվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ (ծածկագիր՝ 94-2.1-Ղ5-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, մարզպետարանի վարչական շենք) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),

2. անձնագիր և (կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին

տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),

3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,

4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,

5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,

6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի **սեպտեմբերի 11-ից** մինչև 2020 թվականի **սեպտեմբերի 23-ը** ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը **10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը**:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի **հոկտեմբերի 16-ին՝ ժամը 11:30-ին**, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի **հոկտեմբերի 20-ին՝ ժամը 11:30-ին**, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «**Հարցարան**» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212300 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամ է: Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

ՀՀ Սահմանադրություն. հոդվածներ՝ 1-2, 5-8, 10, 14-16, 18, 20-21, 25, 27, 32, 35-38, 40-41, 44, 46-47, 49, 57, 58, 64, 70, 72-73, 103
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

«**Նորմատիվ իրավական ակտերի մասին**» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 22-23, 34, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք. 1, 4, 6, 9, 14, 17, 31, 53

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 10, 18, 20, 22-

24, 38, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>

«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 5-8, 18-21, [հղումը](#)

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 1-2, 4-6, 19, [հղումը](#)

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք.

հոդվածներ՝ 2, 3, 5, 10 [հղումը](#)

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 135-Ն որոշում, [հղումը](#)

Գրավոր խոսք: Վազգեն Գաբրիելյան, Երրորդ լրամշակված հրատարակչություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70-111: Հղումը՝

<http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Ինֆորմատիկա 7-րդ դասարան:

Ա 971, Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Երևան, Տիգրան Մեծ, 2012: Հղումը՝

<https://fliphtml5.com/fumf/egdx>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/>

Հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

«Աշխատակազմի կառավարում»

հղումը՝

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

«Խնդրի լուծում» հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

«Որոշումների կայացում» հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, մարզպետարանի վարչական շենք, հեռախոսահամար՝ 60650626, էլեկտրոնային փոստի հասցե՝ gegharquniq.andznakazm@mta.gov.am):

Թեստային առաջադրանքի ձևերը	Հարցը կամ խնդիրը	Օրինակ
1. Ճիշտ պատասխանի ընտրություն	Նշեք ճիշտ պատասխանը	Անհատի կողմից արտահայտվող առանձնահատուկ եւ համեմատաբար կայուն վարքի, մտածողության եւ զգացմունքների կառուցվածքը՝ Ա. Անհատականություն Բ. Գիտակցություն Գ. Բնավորություն Դ. Խիզախություն
2. Այլընտրանքային ընտրություն	Պատասխանեք «Այո» կամ «Ոչ»	Ճիշտ է, արդյոք, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ամենաբարձր լեռը Արարատն է: Պատասխան՝ «Այո» «Ոչ»
3. Համապատասխանության որոշում	Դասավորեք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի եզրույթները եւ աջ սյունակի մեկնաբանությունները	1. Կառավարում՝ Ա. Աշխատողների աշխատանքի գնահատում եւ շտկում՝ սահմանված նպատակներին համապատասխան. 2. Հսկողություն՝ Բ. Կազմակերպությունում աշխատող մարդկանց գործունեության ակտիվացմանը միտված գործողություն 3. Շահադրդում՝ Գ. Կարչարարական գործառույթների իրականացման գործընթաց Պատասխան՝ 1) 1-Ա, 2-Բ, 3-Գ 2) 1-Բ, 2-Գ, 3-Ա 3) 1-Գ, 2-Ա, 3-Բ